Հայաստանի ազգային ագրարային համալսարանում ուսումնաարտադրական ջերմատան վերակառուցման ծրագրի հանդիսավոր բացման արարողությունը

2020թ.-ի սեպտեմբերի 24-ին Հայաստանի ազգային ագրարային համալսարանում (ՀԱԱՀ) տեղի ունեցավ 67 212 ԱՄՆ դոլար արժողությամբ ՀԱԱՀ-ում ուսումնաարտադրական ջերմատան վերափոխման (վերակառուցման) ծրագրի հանդիսավոր բացման արարողությունը: Ծրագիրը ստորագրվել էր ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Ջուն Յամադայի և Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնի (ICARE) տնօրեն պարոն Արթուր Գրիգորյանի կողմից 2019թ.-ի մարտի 26-ին, և նպատակ ուներ Հայաստանի ազգային ագրարային համալսարանում հին և սպառված ջերմատունը փոխարինել գերժամանակակիցով: Արդյունքում, նախատեսվում է խթանել գյուղատնտեսության արտադրողականությունը, և ՀԱԱՀ-ի ներսում և դրա սահմաններից դուրս մոտ 70 ուսանող, ինչպես նաև մասնագետներ և ընտանեկան ջերմոցային տնտեսությունների գյուղատնտեսներ ուղղակիորեն կօգտվեն ծրագրից:

Արարողությունը տեղի ունեցավ ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Ջուն Յամադայի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի փոխնախարար պարոն Արթուր Մարտիրոսյանի, ՀՀ էկոնոմիկայի փոխնախարար պարոն Արման Խոջոյանի, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտոր պարոն Վարդան Ուռուտյանի և Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնի տնօրեն պարոն Արթուր Գրիգորյանի ներկայությամբ:

Պարոն Գրիգորյանը ողջունեց հյուրերին կարճ խոսքով, որից հետո հրավիրեց ելույթով հանդես գալ պարոն Մարտիրոսյանին, պարոն Խոջոյանին, դեսպան Յամադային և պարոն Ուռուտյանին:

Արարողությանը հաջորդեց շրջայց ջերմոցի 4 առանձին հատվածներում, որը բաղկացած էր Ֆարմբոտ (Farmbot) հատվածից և 3 այլ հատվածներից, ցանված տարբեր

բույսերով՝ վարդերով, վարունգով և լոլիկով: Գյուղատնտեսներն ու յուրաքանչյուր հատվածի մասնագետները ներկայացրեցին ջերմոցային տեխնոլոգիան և բացատրեցին աճի և տնկման գործընթացի առանձնահատկությունները:

Այնուհետև շրջագայությանը հաջորդեց ՀԱԱՀ-ում արտադրված գինով հյուրասիրությունը:

Դեսպան Յամադան և ՀԱԱՀ ռեկտոր պարոն Ուռուտյանը քննարկում են արարողությունը

ICARE-ի տնօրեն պարոն Գրիգորյանի ողջույնի խոսքը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի փոխնախարար պարոն Արթուր Մարտիրոսյանի ելույթը

ՀՀ էկոնոմիկայի փոխնախարար պարոն Արման Խոջոյանի ելույթը

Դեսպան Յամադայի ելույթը

Պարոն Ուռուտյանի ելույթը

Պարոն Ուռուտյանը դեսպան Յամադային հանձնում է գինի և վկայական

Պարոն Ուռուտյանը դեսպան Յամադային հանձնում է նվեր խորհրդանիշ ծիրանի տեսքով

Դեսպան Յամադան կտրում է ժապավենը

Պարոն Ուռուտյանը ներկայացնում է Ֆարմբոտը

Պարոն Ուռուտյանը և գյուղատնտես մասնագետը ներկայացնում են ջերմատան վարդերը

Դեսպան Յամադան և ռեկտոր Ուռուտյանը շնորհավորում են միմյանց ծրագրի հանդիսավոր բացման առիթով